

Ոյր նուիրի՛ այս շքեղ տուն  
 Ի յաւիտեան՝ ժառանգութիւն,  
 Մինչ այն տեղոյն՝ էր պատրիարք,  
 Տ. Կարրիէլ տեսուչս արք:  
 Եւ պատրիարք՝ Բիւզանդիոյ,  
 (Տ. Ստեփաննոսի Աղաւնոյ)  
 Շինեալ ջանիւք Տեառն Յովհաննու,  
 Վարդապետի Զմիւռնացւոյ,  
 Փոխանորդին՝ Աթոռին մնծի.  
 Երուսաղէմ՝ սուրբ քաղաքի  
 Նոր օրհնութիւն՝ Տեառն տալուք.  
 Որ արար զայս՝ շնորհ յատուկ,  
 Յամի տեառն 1832 Օգոստոսի 3 ին  
 (Բիւզանդիոն Թ. 1738):

Յովհաննէս վրդ. Ս. Երուսաղէմի Սկիւտարի այգիին գետինը վազրփի վերածել տալով՝ հաստատուն տուրքի մը փոխարէն մաս առ մաս վաճառել կուտայ՝ տուներ շինելու համար իբր վազրփ Ս. Յակոբի վանքին. եպս. կը ձեռնադրուի 1838ին: Ժամանակ մը գաղթելով փոխանորդութենէ կը վարէ Օրթագլուղի Խնդրակասար Ս. Աստուածածին եկեղեցիին քարոզչութիւնը եւ Պուսի առջին հոգևոր ժողովին անդամակցութեան կը կոչուի 1847ին. դարձեալ Փկե (1849—1850). կ'ընտրուի Պե. 1850ին և Երուսաղէմի միաբան Մարտիրոս, Դուկաս և Յակոբոս վարդապետներու հրաւիրակութեամբ կը ժամանէ Ս. Յակոբի վանքը, և 1850 նոյ. 11ին պաշտօնապէս կը բազմի իր աթոռը. 1853ին շինել կուտայ արդի հոյակապ քարուկիր պատրիարքարանը ճարտարապետութեամբ Իջմեցի Սարգիս գալֆային, նոյն շէնքին արտաքին դրան վրայ կը դտնուի հետեւեալ յիշատակարանը:

«Եթէ ոչ Տէր շինէ գտունն

Ի նանիր վաստակին շինողք նորա:

Ուստի ապաւինեալ ի շնորհս Տեառն յաջողութեամբ նորին ի հիմանէ կառուցաւ հոյակապ յորկս պանծալի ազգասէր ջանիւք Տ. Տ. Յովհաննու Դ. Սրբազան Արքեպիսկոպոսի Զմիւռնացւոյ և պատրիարքի Առաքելական Աթոռոյ Երուսաղէմի ի յիշատակ հոգելոյս նախնեաց ի պարծանս լրութեան ազգիս և ի վայելումն ապագայ հարց. 1853 ի վերջ Ապրիլի»: